ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Արեվաշող համայնք,
հասցե գ._Արեվաշող 1 Փ. 105,
Հեռախոս 0255 2-21-76,
էլ. փոստ arevashogh.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«21» Հունվարի 2020թ. № 001

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ – Ի ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33 – րդ հոդվածով և հաշվի առնելով Լոռու մարզի Արևաշող համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 21 – ի «Լոռու մարզի Արեվաշող համայնքի ավագագանու 2019 թվականի դեկտեմբերի 18 – ի Լոռու մարզի Արևաշող համայնքի 2020 տարեկան բյուջեն հաստատելու մասին» թիվ 42 – Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 2 – Ն որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Արևաշող համայնքի 2020թ – ի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային համամասնությունները համաձայն թիվ 1, 2 հավելվածների:

2. Հաստատել համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների 2020թ – ի ծախսերի նախահաշիվները ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման հոդվածների:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Արեվաշող համայնք,
հասցե գ._Արևվաշող 1 Փ. 105,
Հեռախոս 0255 2-21-76,
էլ. փոստ arevashogh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» Հունվարի 2020 թվականի № 02

ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ «Հողային Օրենսգրքով», «Նորմատիվ Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23 – րդ հոդվածի 6 – րդ կետով և հիմք ընդունելով «Արտյոմ Սաքանյան» ԱՁ – ի կողմից կազմված հատակագիծը, հողի բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի կողմից ընդունված 23.07.1991 թվականի թիվ 1/43 որոշումը, հարգելով Ռոստոմ Սարգսի Մագոյանի դիմում-խնդրանքը այն մասին, որ Արևաշող համայնքում 06-021-0050-0001 ծածկագրի տակ գտնվող 0,10516 հա, սեփականության իրավունքով իրենց պատկանող տնամերձ հողամասի վրա վերջինիս և նրա ընտանիքի մյուս անդամների կողմից 1991 թվականին կառուցվել է 140.56 քմ մակերեսով բնակելի տուն, 2.4 քմ մակերեսով աստիճանահարթակ, 20.8 քմ մակերեսով անասնագոմ, սակայն կառուցման վերաբերյալ փաստաթղթերը չեն պահպանվում ուստի

Նկատի ունենալով, որ տվյալ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, և քանի, որ դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չեն գտնվում հողային օրենսգրքով նախատեսված 60-րդ հոդվածի ցանկում, ուստի ելնելով վերոգրյալից

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Օրենքի ուժով ճանաչել Լոռու մարզի Արևաշող համայնքի 3 փ. 68 տուն հասցեի բնակիչներ Ռոստոմ Սարգսի Մագոյանի ծնված 15.01.1958թ. – ին, Մարինե Վարազդատի Ադամյանի 09.03.1964թ.-ին, Սպարտակ Ռոստոմի Մագոյանի ծնված 03.01.1985թ – ին, Սարգիս Ռոստոմի Մագոյանի ծնված 03.04.1994թ. – ին և նույն համայնքի 3 Փ. 3 նրբ. 63 տնակ հասցեի բնակիչ Ելենա Ռոստոմի Մագոյանի ծնված 02.01.1988թ. – ին, սեփականության իրավունքը Արևաշող համայնքում 06-021-0050-0001 ծածկագրի տակ գտնվող 0,10516 հա տնամերձ հողամասի վրա կառուցված 140.56 քմ մակերեսով բնակելի տան, 2.4 քմ մակերեսով աստիճանահարթակի, 20.8 քմ մակերեսով անասնագոմի նկատմամբ:
2. Սույն որոշման մեկ օրինակը տրամադրել կադաստրի համապատասխան ստորաբաժանմանը, որպես հիմք վերը նշված շենք շինություններին պետական գրանցում տալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Պ. ՊԱՊԻԿՅԱՆ